Պրոլետարներ բոլոր յերկրների, միացե՛ք!

№ 51

ՀՐԱՀԱՆԳ

ԳՅՈՒՂԽՈՐՀՈՒՐԴՆԵՐԻ ՄԵԿՅԻԱՆԵՐԻ ՅԵՎ ՆՐԱՆՑ ԲՐԻԳԱԴՆԵՐԻ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ

ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ
ՀՍԽՀ ԿԵՆՏԳՈՐԾԿՈՄԻ ԿԱԶՄԲԱԺՆԻ

ՅԵՐԵՎԱՆ 1933

22 NOV 2017

Պրոլետարքներ բոլոր յերկրների, միացե՛ք

№ 51

ՀՐԱՀԱՆԳ

ԳՅՈՒՂԽՈՐՀՈՒՐԴՆԵՐԻ ՍԵԿՑԻԱՆԵՐԻ ՅԵՎ ՆՐԱՆՑ ԲՐԻԳԱԴՆԵՐԻ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ

ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ
ՀՍԽՀ ԿԵՆՏԳՈՐԾԿՈՄԻ ԿԱԶՄԲԱԺՆԻ

ՅԵՐԵՎԱՆ 1933

Հանձնված է արտադրության նոյեմբերի 18-ին
Ստորագրված է տպագրելու նոյեմբերի 25-ին

Երևան, Պետհրատի տպարան

Պատվեր 2236 գլավլիտ 8849 տիրաժ 5000

ԱԶԳԱՅԻՆ ... ՀԱՄԱՐ
II-26727 գր

ՎՈՐՈՇՈՒՄ

ՀՍԽՀ Կենտրոնական Գործադիր Կոմիտեի նախագահության՝ գյուղական խորհուրդների սեկցիաների վերակազմության մասին

27 օգոստոսի 1933 թ.

ՀՍԽՀ Կենտրոնական Գործադիր Կոմիտեի Նախագահությունը ՎՈՐՈՇՈՒՄ Է՝

1. Ի փոփոխումն գյուղական խորհուրդների կանոնադրության հոդվ. 24 (Որ. Կ. Ժող. 1931 թ. № 1, հոդվ. 29) գյուղական խորհուրդներին կից կազմակերպել հետևյալ սեկցիաները.—

ա. Արտադրական խորհրդակցություն

բ. Ֆին հարկային

գ. կոոպերատիվ—մթերումների

դ. կուլտ—կենցաղային

յե. ճանապարհային շինարարության և կապի.

զ. ԲԳՏ. և հեղափոխական օրինականության:

Ծանոթություն.— Նայած տեղական պայմաններին՝ գյուղխորհրդի վորոշմամբ և շրջգործկոմի հավանությամբ, կարելի յե սեկցիաների թիվն ավելացնել:

2. Գյուղխորհուրդների սեկցիաներն իրենց աշխատանքները կազմում են բրիգադային մեթոդով: Յուրաքանչյուր սեկցիա կարող է բաժանվել հիմնական բրիգադների՝ մնայուն աշխատանքները կատարելու համար, ինչպես և ժամանակավոր բրիգադների՝ վորոշ աշխատանքներ կատարելու համար:

3. Առաջարկել Կենտգործկոմի Կազմբաժնին 3 որվա ընթացքում սեկցիաների և բրիգադների վերակազմության ու անելիքների մասին մշակել և հղել տեղերին հրահանգ:

ՀՍԽՀ Կենտրոնական Գործադիր
Կոմիտեյի նախագահ՝ Ս. ՄԱՐՏԻԿՅԱՆ

ՀՍԽՀ Կենտրոնական Գործադիր
Կոմիտեյի քարտուղար՝ Ռ. ԴԱՇՏՈՅԱՆ

ՀՐԱՀԱՆԳ

ՀՍԽՀ գյուղական խորհուրդների սեկցիաների վերակառուցման մասին

30 օգոստոսի 1933 թ.

Գյուղական խորհուրդների սեկցիաների կազմակերպման բնագավառում գոյություն ունեցող բացերը վերացնելու, ինչպես նաև սեկցիաների աշխատանքները կանոնավոր ու նորմալ հիմքերի վրա դնելու նպատակով այսու առաջադրվում է հետևյալ հրահանգը.

Վերակառուցման ժամկետ

1. Սույն թվի սեպտեմբերի 15-ից մինչև նոյեմբերի 1-ը հայտարարվում է սեկցիաների վերակառուցման ժամանակաշրջան, վորի ընթացքում պետք է վերանայվեն ու վերակազմվեն գյուղխորհուրդների բոլոր սեկցիաները:

Վերակառուցման աշխատանքի ձևերը

2. Գյուղական խորհուրդների վերակառուցման խնդիրները նախորոք պետք է մշակել շրջգործկոմների կազմբաժիններում, հրահանգիչների կամ այդ նպատակով ընտրված յեռյակների միջոցով.

3. Հարցը մշակելիս կազմբաժինը, հրահանգիչը կամ յեռյակը ձեռքի տակ պետք է ունենա լրիվ ինֆորմացիա ու վիճակագրական նյութեր շրջանի, գյուղական խորհուրդների սեկցիաների մասին, ինչպես նաև ԿԳԿ- կողմից հղված հրահանգները և այլ նյութերը:

4. Գոյություն ունեցող նյութերի և անհրաժեշտ տեղեկությունների հիման վրա կազմբաժինը, հրահանգիչը կամ յեռյակը մշակում և առաջադրում է շրջգործկոմի նախագահության հաստատմանը ծրագիր գյուղխորհուրդների սեկցիաների վերակառուցման մասին, ծրագիր՝ վորն իր մեջ պետք է պարունակի աշխատանքների ժամանակաշրջանը, վերակառուցման յենթակա գյուղխորհուրդների անունները, այդ աշխատանքների մեջ ներգրավվելիք ակտիվիստների անունները, նրանց ամրացման կարգը, վերակառուցման առթիվ հրավիրվելիք խորհրդակցության ժամկետը, հարցի մասսայականացումը և այլն: Ծրագրի հետ միաժամանակ մշակվում է հետևյալ սխեման.

№ № ը. կ.	Գյուղխորհուրդի անունը	Մինչ վերակառուցումը գոյություն ունեցող սեկցիաների անունները	Առաջադրվում վերակազմել հետևյալ հիմունքներով
1	Աշտարակ	1. Գյուղարտադրական խորհրդակցություն	1. Գյուղարտադրական խորհրդակցություն ա) անասնապահական բրիգադ բ) անխ. կուլտ. բրիգադ
		2. Ֆինբյուջետային և պետվարկին օժանդակող սեկցիա	2. Ֆինվարկային սեկցիա ա) բյուջետային բրիգադ բ) հարկային բրիգադ գ) միջմոբի բրիգադ

5. Շրջանային գործադիր կոմիտեի նախագահության նիստում հարցը քննվելուց և ծրագիրը հաստատվելուց հետո հրավիրել շրջանային խորհրդակցություն, մասնակցությամբ գյուղխորհուրդների նախագահների, քարտուղարների, սեկցիաների նախագահների և ակտիվի:

Վերակառուցման սկզբունքները

6. Սեկցիաների վերակառուցման հիմքում դրվում են հետևյալ սկզբունքները.

ա) սեկցիաները վերակառուցել բրիգադային հիմունքներով.

բ) սեկցիաների կազմը լրացնել նոր և թարմ ուժերով.—ակտիվ կոլտնտեսականներ, մենատնտեսներ, չքավորներ, բատրակներ, կին-պատգամավորներ, հաս-

բակական կազմակերպությունների ներկայացուցիչներ և այլն:

գ) անունի տեսակետից սեկցիաների մեջ մտցնել միաձևություն.

դ) սեկցիաների յուրաքանչյուր բրիգադին, անդամին գործնականապես կապել գյուղի աշխատանքների կոնկրետ ճյուղերի հետ:

Ի՞նչ սեկցիաներ և բրիգադներ է ունենում գյուղական խորհուրդը

7. Գյուղական խորհուրդներին առընթեր կազմակերպել հետևյալ սեկցիաները համապատասխան բրիգադներով.—

1. Արտադրական խորհրդակցություն

ա) անասնապահական բրիգադ
բ. դաշտավարական բրիգադ
գ. տեխնիկական կուլտուրաների բրիգադ
2. Ֆին—հարկային սեկցիա
ա. բյուջետային բրիգադ
բ. հարկային բրիգադ
գ. միջոցների մոբիլիզացիայի բրիգադ
3. Կոոպերատիվ— մթերային սեկցիա
ա. կոոպերատիվ առևտրական բրիգադ
բ. մթերման բրիգադ
4. Կուլտ–կենցաղային սեկցիա
ա. կուլտ—լուսավորության բրիգադ
բ. առողջապահական բրիգադ
գ. կենցաղային բրիգադ
5. Ճանապարհաշինարարության և կապի սեկցիա
ա. ճանապարհաշինարարության բրիգադ
բ. կապի բրիգադ
6. ԲԳՏեսչության և հեղափոխական որինականության սեկցիա
ա. ԲԳՏ բրիգադ
բ) հեղափոխական որինականության բրիգադ

գ) վորոշումների կատարման վրա հսկող բրիգադ

8. Բացի այս հրահանգի հոդվ. 7–ում մատնանշված սեկցիաներից անհրաժեշտության դեպքում գյուղական խորհուրդները կարող են կազմակերպել և այլ սեկցիաներ, նույպես բրիգադային հիմունքներով: Պարտադիր սեկցիաների թվի նվազեցում չի թույլատրվում:

9. Սեկցիաների և նրա բրիգադների կոնկրետ անելիքները կարգավորվում են հատուկ հրահանգով, վորի մասսայականացման համար առաջարկվում է հետևյալը.

ա) տեղական թերթերում՝ «Բամբակի համար», «Հարվածային բրիգադ», «Բոլշևիկյան տեմպով», «Սոց արշավ», «Բանվոր», «Սոց. Անասնապահություն», «Պղնձի Ֆրոնտում», «Պայքար Պղնձի համար», «Լենինի դրոշով», «Խորհրդային գյուղ», «Այգեգործական կոլխոզնիկ», ««Կարմիր Բատարգեյար» և այլն, դեռեղել հոդվածներ, ինչպես նաև հրահանգների հիմնական սկզբունքները.

բ) գյուղական խորհուրդների սեկցիաների և ակտիվի ընդհանուր ժողովներում դնել զեկուցումներ սեկցիաների վերակառուցման և նրանց անելիքների մասին:

10. Յուրաքանչյուր գյուղում, վորտեղ գյուղական խորհուրդ չի գտնվում, սեկցիա չի կազմակերպվում, նրա փոխարեն կազմակերպվում են միացյալ գյուղական խորհուրդի սեկցիաների համապատասխան բրիգադները, ներգրավելով այդ բրիգադների մեջ տվյալ գյուղում ապրող գյուղխորհուրդի անդամներին, սեկցիաներին և այլ ակտիվիստներին:

11. Սեկցիաների վորոշումների կիրարկման ասպարիզում գոյություն ունեցող ձգձգումներին վերջ տալու նպատակով միջոցներ ձեռք առնել, վոր սեկցիաների արձանագրությունները քննության առնվեն գյուղխորհուրդների նախագահության նիստերում, իսկ անհրաժեշտության դեպքում հարցերին ընթացք և տալիս գյուղական խորհրդի նախագահը, յեթե այդպիսիները մտնում են նախագահների իրավասության մեջ:

12. Սեկցիաների բրիգադները ոպերատիվ աշխա-

տանքային կապ պաշտպանում են սեկցիաների նախագահների հետ, իսկ նրանց բացակայության դեպքում գյուղխորհուրդների նախագահների հետ:

13. Գյուղխորհուրդների սեկցիաների վերակառուցման աշխատանքները ավարտել վոչ ուշ, մինչև հոկտեմբերի 15-ը սոցմրցման ու հարվածայնության նշանաբանի տակ:

14. Վերակառուցման աշխատանքների արդյունքները ամփոփել և հղել ԿԳԿ-ի կազբաժնին վոչ ուշ մինչև նոյեմբերի 10-ը: Վիճակագրական արդյունքների մասին տեղեկացնել հետևյալ ձևով.

№ № բաժ. կարգ.	Սեկցիաների և բրիգադների անունները	Բանակը	Անդամների թիվը	ՆՐԱՆՑԻՑ	
				Գյուղխորհրդ. անդամները	Վոչ գյուղխորհրդի անդամ
1	Գյուղարտադրական խորհրդակցություն	15	300	200	100
	ա. անասնապահական բրիգադ	10	100	50	50
	բ. տեխն. կուլտ բրիգադ	8	50	30	20
	գ. դաշտավարական և այլն	15	150	100	50

Վիճակագրական նյութերի հետ միաժամանակ ներկայացնել համառոտ զեկուցագիր վերակառուցման աշխատանքների մասին:

14. Այս հրահանգի ճիշտ և ժամանակին կիրառելու ամբողջ պատասխանատվությունը դրվում է շրջանային գործադիր կոմիտեների նախագահների վրա:

15. Այս հրահանգի հրատարակումով վերացած համարել կենտգործկոմի կազմբաժնի կողմից հղած ս.թ. մարտի 11-ի «Կազմ-մասսայական աշխատանքների մասին» հրահանգը:

ՀՍԽՀ Կենտրոնական Գործադիր Կոմիտեյի
քարտուղար՝ Ռ. ԴԱՇՏՈՅԱՆ

ՀՍԽՀ Կենտրոնական Գործադիր Կոմիտեյի
Կազմբաժնի վարիչ՝ Գ. ՑԵՂԻԱԶԱՐՅԱՆ

ՀՐԱՀԱՆԳ

Գյուղխորհուրդների սեկցիաների աշխատանքների մասին

Ա. Ընդհանուր կանոններ

1. Գյուղխորհուրդների աշխատանքներում բանվորների, կոլտնտեսականների, ծառայողների, չքավորների և միջակների լայն աշխատավորական մասսաները ներգրավելու, գյուղի տնտեսական և կուլտուրական շինարարության յուրաքանչյուր արտադրական բնագավառը կոնկրետ ղեկավարության մեջ ընդգրկելու և հիշյալ խորհուրդների գործունեության զանազան բնագավառների վերաբերյալ խնդիրները նախամշակելու նպատակով հանձնարարվում է գյուղական խորհուրդներին կից կազմակերպել հետևյալ սեկցիաները՝

1. Արտադրական
2. Ֆին-հարկային
3. Կոոպերատիվ-մթերումների
4. Կուլտ-կենցաղային
5. Ճանապարհային շինարարության և կապի
6. ԲԳՏ և հեղափոխական օրինականության:

Ծանոթություն.— 1. Նայած տեղական պայմաններին՝ գյուղխորհուրդների հայեցողությամբ կարելի է սեկցիաների թիվը ավելացնել:

2. Յուրաքանչյուր գյուղում, վորտեղ գյուղխորհուրդ կամ շրջգործկոմ չի գտնվում, կազմակերպվում են միայն միացյալ գյուղխորհուրդի համապատասխան սեկցիաների բրիգադներ, վորոնց առորյա աշխատանքների վրա հսկում և գլխավորում է գյուղխորհուրդի լիազորը:

2. Գյուղխորհուրդների սեկցիաներն իրենց աշխատանքները կատարում են բրիգադային մեթոդով. ըստ վորում յուրաքանչյուր սեկցիան կարող է բաժանվել հիմնական բրիգադների՝ համաձայն ներքո հիշյալ հոդվածների, կամ յելնելով տեղական պայմաններից, առանձնացնել մնայուն բրիգադներ՝ տեվական աշխա-

տանքների համար, ինչպես և ժամանակավոր բրիգադներ՝ վորոշ աշխատանք կատարելու նպատակով:

Բ. Սեկցիաների կազմը

3. Տվյալ գյուղխորհուրդի բոլոր անդամները և թեկնածուները պարտավոր են մտնել սեկցիաներից մեկի կազմի մեջ իրենց ընտրությամբ.

4. Բացի գյուղխորհրդի անդամներից և թեկնածուներից, սեկցիաներում կամավոր կերպով կարող են մասնակցել նաև տվյալ գյուղխորհուրդի տերիտորիայի սահմաններում բնակվող կոլխոզնիկները, աշխատավոր մենատնտեսները, սովխոզի և ՄՏԿայանի բանվորները, արհմիության ներկայացուցիչները, զոոտեխնիկները, անասնաբուժները, բժիշկները, բուժակները, ուսուցիչները, կանանց պատժողների ակտիվ պատգամավորուհիներ և այլն:

Ծանոթություն.—Ընտրական իրավունքից զրկված անձեր սեկցիաների անդամ չեն կարող լինել.

5. Յուրաքանչյուր սեկցիայի կազմը հաստատվում է գյուղխորհուրդի նախագահության կողմից:

Գ. Սեկցիաների անդամների իրավունքները ու պարտականությունները

6. Սեկցիայի ամեն մի անդամ պարտավոր է ակտիվորեն մասնակցել սեկցիայի աշխատանքներին և ճշտորեն կատարել սեկցիայի բյուրոյի, կամ նախագահի կողմից իր վրա դրված հանձնարարությունները:

7. Առանց հարգելի պատճառի յերեք անդամից ավելի սեկցիայի նիստերին չմասնակցելու կամ սեկցիայի հանձնարարությունները չկատարելու դեպքում, սեկցիայի անդամը դուրս է հանվում սեկցիայի անդամությունից և յեթե նա գյուղխորհուրդի անդամ է, նրա հետ-կանչելու հարցը դրվում է ընտրողների առաջ:

8. Սեկցիայի նիստերում բոլոր ակտիվ աշխատողները և սեկցիաներում ներգրավված ակտիվիստները ազատվում են վճռական ձայնի իրավունքից՝ թեկուզ նրանք գյուղխորհուրդի անդամ չլինեն:

9. Սեկցիայի նախագահները, քարտուղարները և բոլոր մնացած անդամները սեկցիայի աշխատանքներին մասնակցելու համար վարձատրություն չեն ստանում:

Դ. Սեկցիաների կազմակերպչական կառուցվածքն ու աշխատանքի կարգը

10. Գյուղխորհուրդի սեկցիաների կողմից ընտրվում է 3—5 հոգուց բաղկացած բյուրո, վորի պարտականությունն է ղեկավարել սեկցիաների գործունեությունը:

Ծանոթություն.— Բյուրոները կազմակերպվում են միայն այն սեկցիաներում, վորոնց անդամների թիվը 10-ից պակաս չէ:

11. Սեկցիայի (բյուրոյի) նախագահ վորպես ընդհանրապես ընտրվում է գյուղխորհուրդի նախագահության անդամներից մեկը և հաստատվում է գյուղխորհուրդի նախագահության կողմից:

12. Սեկցիայի պլենումի նիստերը հրավիրվում են և աշխատանքի կարգը վորոշվում է սեկցիայի բյուրոյի միջոցով: Սեկցիայի բյուրոյի նիստ հրավիրվում է ամսական յերկու, իսկ պլենում՝ ամսական մեկ անգամից վոչ պակաս:

13. Սեկցիայի բյուրոյի և պլենումի նիստերում կազմվում և արձանագրություն, վոր ստորագրվում է նախագահի ու քարտուղարի կողմից և ներկայացվում գյուղխորհուրդի նախագահության՝ ի հաստատություն:

14. Յուրաքանչյուր սեկցիայում առանձնացվում է մեկ ակտիվիստ, վորի վրա պարտականություն է դրվում բացատրական ստուգել սեկցիայի վորոշումների կատարումը:

15. Այն դեպքերում, յերբ սեկցիաներից մեկի կողմից մշակված հարցերը առնչություն ունեն ուրիշ սեկցիաների աշխատանքների հետ, այդ սեկցիաներից մեկի նախագահի պահանջով գյուղխորհուրդը հրավիրում է համապատասխան սեկցիաների միացյալ նիստ:

16. Սեկցիայի կողմից մշակված և ընդունված վորոշումները ներկայացվում են գյուղխորհուրդի նախագահության և քննության և հաստատության, վորից հետո դրանք կիրառվում են վորպես գյուղխորհուրդի վորոշումներ:

17. Սեկցիաները իրենց գործունեության ընթացքում ղեկավարվում են գյուղխորհրդի ապարատից և չեն ունենում հատուկ գործավարություն:

18. Սեկցիաները վոչ պակաս քան յերեք ամիս մեկ անգամ, կամ գյուղխորհուրդի պահանջմամբ, գյուղխորհուրդին ներկայացնում են հաշվետվություն իրենց կատարած աշխատանքների մասին: Սեկցիաները հաշվետու յեն նույնպես ընտրողների առաջ, գյուղխորհուրդների նախագահության կողմից մշակված կարգով:

19. Սեկցիաներն իրենց աշխատանքը կատարում են համաձայն ծրագրի՝ մշակված գյուղխորհուրդի աշխատանքների ընդհանուր պլանի հիման վրա:

20. Սեկցիաները իրենց աշխատանքները առաջ են տանում հիմնվելով սոցմրցման և հարվածայնության վրա, կնքված ինչպես զանազան սեկցիաների, նրանց բրիգադների, նույնպես և սեկցիաների անդամների միջև:

21. Աշխատանքի փորձերի փոխանակման և գյուղխորհուրդների կողմից ցույց տրվելիք ղեկավարությունը ուժեղացնելու նպատակով, գյուղխորհրդի նախագահությանառաջարկությամբ կամ ինքնաբերաբար սեկցիաները կատարում են փոխադարձ ստուգումներ և արդյունքները ներկայացնում են պլենումներին, այդ նպատակով էլ, վոչ պակաս քան ամիսը մեկ անգամ, գյուղխորհուրդը հրավիրում է բոլոր սեկցիաների հրահանգչական խորհրդակցություն:

22. Կարիք զգացված դեպքերում սեկցիաները գյուղխորհրդի հանձնարարությամբ կամ իրենց նախաձեռնությամբ լսում են գյուղխորհրդի տերիտորիայում գտնվող կոլտնտեսության, խորհտնտեսության, ՄՏԿայանների և այլ հիմնարկների ու ձեռնարկների ղեկուցումները, նաև խորհրդային պատգամավորական

խմբակների զեկուցումները՝ համապատասխան աշխատանքի բնագավառում նրանց կատարած գործերի մասին, համաձայն իրենց աշխատանքի ծրագրի:

Սեկցիաները նույնպես և ստուգում են կոլտնտեսությունները, պպրոցներն ու հիվանդանոցները, մթերման կայանները, հիմնարկներն ու ձեռնարկները և զեկուցումների, հաշվետվությունների և ստուգումների հիման վրա գյուղխորհուրդներին ներկայացնում են իրենց յեզրակացությունները և գործնական առաջադրանքները:

3ե. Սեկցիաների աշխատանքների բովանդակությունը

1. Արտադրական խորհրդակցություն

23. Արտադրական խորհրդակցությունը բաժանվում է հետևյալ բրիգադների՝ 1. Տեխնիկական կուլտուրաների, 2. Դաշտավարական և 3. Անասնապահական, համաձայն տվյալ գյոտի գյուղատնտեսական թեքումի:

24. Տեխնիկական կուլտուրաների (բամբակ, ծխախոտ, և այլն) բրիգադը կատարում է հետևյալ աշխատանքները.

ա) Մշակել գյուղխորհուրդի կամ խորհրդային մեքենատրակտորային կայանների կողմից տրված առաջադրանքների համաձայն տեխնիկական կուլտուրաների ցանքի և տնկման պլանների, նույնպես և հսկել ջերմանոցների և անկտարանների ճիշտ կազմակերպման:

բ) Մշակել միջոցառումներ բերքատվությունը բարձրացնելու, ապրանքային արտադրության զարգացմանը և հսկել, վոր ագրոտեխնիկան իրագործվեն:

գ) Ուժանդակել սերմի մթերման, ընտրության և ավելի լավ տեսակի սերմերի հայթայթման:

դ) Վերահսկողության տակ առնել մեքենաների, գյուղատնտեսական գործիքների և ջերմանոցների ռացիոնալ օգտագործումը:

յե) Կազմակերպել պայքարը՝ տեխնիկական կուլտուրաների վնասատուների դեմ:

զ) Ուժանդակել տեխնիկական կուլտուրաների պլանտացիաներում առավելագույն չափով կանանց աշ-

խառանքի գործադրման ու ոգտագործման, բանվորական ուժի և գործիքների ճիշտ դասավորման, աշխատանքի հաշվառումը կազմակերպելու և դիմադրությունը լիկվիդացիայի յենթարկելու:

ը) Ոժանդակել կոնտրակտացիաները ճիշտ կիրառելու, պայմանագրություններով հանձն առնված պարտավորությունները կատարելու և ապրանքային արտադրությունը կազմակերպված ձևով հանձնելու:

թ) Ոժանդակություն ցույց տալ խորհտնտեսություններին և կոլտնտեսություններին բամբակի, ծխախոտի, և փոխադրության համար տեղերում տարրանների արտադրության և հայտնաբերելու գործին:

ժ) Ոգնել խորհտնտեսություններին բանվորական ուժը կազմակերպված ձևով հավաքագրելու:

ի) Ոժանդակել խորհրդային կազմակերպություններին դյուղատնտեսական ցուցահանդեսներ, եքսկուրսիաներ, կոնկուրսներ կազմակերպելու գործում:

6. Անցկացնել մասսայական աշխատանք տեխնիկական կուլտուրաների դարդացման ասպարիզում արված դյուղատնտեսական և ռացիոնալացման առաջարկները հավաքելու համար:

Նանոթություն.— Տեխնիկական կուլտուրաների բրիգադայի աշխատանքների բովանդակությունը վորոշվում և համաձայն այն տեխնիկական մշակության տեսակի, վորը մշակվում է տվյալ կյուղխորհուրդի տերիտորիայում:

25. Անասնապահական բրիգադը կատարում և հետևվյալ աշխատանքները.

ա) Մասնակցել իր դյուղի սահմաններում սոցիալիստական անասնապահության դարդացման վերպարերյալ պլանների կատարմանը:

բ. Հսկել և ոժանդակել մեծ և վորը յեղջերավոր անասունների խնամքի և պահպանման գործին, բոլոր խորհտնտեսություններում, մասնավորապես անասնապահական խորհ. տնտեսություններում, կոլտնտեսությունների ապրանքային ֆերմաներում:

գ) Կազմակերպել անասունների կանոնավոր կերակրելը և բարելավել կերի բազան (խոտացանություն, արմատապտուղների մշակում, սիլոսացում, խոտհնձի կամպանիաներ, բնական արոտավայրերի և խոտհարքների ճիշտ և խնայողաբար ոգտագործումը), կարգավորել անասունները ջրելու խնդիրը:

դ. Մասնակցել անասունների համար գոմերի կառուցմանը, ապրանքային ֆերմաների պլանների մշակմանը, հսկել շինանյութերի ճիշտ ոգտագործմանը և ոմանը, հսկել շինանյութերի ճիշտ ոգտագործմանը և ոժանդակել դրանց տեղում հայտաբերելու և արտադրելու:

յե. Իրականացնել վերահսկողությունը տվյալ գյուղխորհրդի սահմաններում գտնվող ցեղային անասուններ արտադրողների ոգտագործման վրա, հսկել զուգավորման կամպանիաների անցկացման և կազմակերպման, մշակել միջոցառումներ՝ վորոնք ապահովում են ցեղի ապնվացումն ու յերիտասարդ անասունների դարդացումը:

զ) Սահմանել հսկողություն կոլտնտեսություններում և խորհտնտեսություններում և մենատնտեսների սեկտորում անասնաբուժական կանոնների մինիմումի իրականացման վրա:

ը. Ժամանակին ահազանգ տալ և առողջապահական անասնաբուժական աշխատակիցների հսկողության տակ կազմակերպել պայքարը անասունների ամեն տեսակ հիվանդությունների դեմ, գործադրելով նախազգուշական միջոցառումներ վարակումների դեմ. մասնավորապես անասունների հավաքատեղերում, ջրելու վայրերում և այլն:

թ. Հսկողություն սահմանել գյուղում գոյություն ունեցող անասնաբուժական հիմնարկների և անասնաբուժական պերսոնալի աշխատանքների վրա:

ժ. Ազգաբնակության մեջ աշխատանք կազմակերպել անասնաբուժական անդրադիտությունը վերացնելու, անասունների «հեքիմության» պատճառած վնասները ազգաբնակությանը պարզելու համար:

ի. Հսկել անասնապահական սովխոզներում և կոլխոզներում ապրանքային ֆերմաներում աշխատանքի

ճիշտ կազմակերպման, պայքարել հաշվառման և հաշվետվության լավագույն կազմակերպվածության համար:

լ. Ոժանդակել մեխանիզացիայի յենթարկելու համար այն բոլոր աշխատանքները, որոնք սպասարկում են անասնապահությանը:

խ. Ողնություն ցույց տալ խորհտնտեսություններին և կոլտնտեսություններին անասնապահական կադրերը՝ հովիվներ և այլ աշխատողներ պատրաստելու նպատակով դասընթացներ բաց անելու:

Ծանոթություն.— Անասնապահական բրիգադների աշխատանքի ղեկավարությունը սահմանվում է համաձայն տվյալ գյուղխորհուրդի սահմաններում տիրապետող անասնապահության ճյուղի:

26. Դաշտավարական բրիգադը կատարում է հետևյալ աշխատանքները.

ա) Մշակել իր գյուղխորհուրդի սահմաններում կատարվելիք ցանքի կամպանիաների պլանները՝ համաձայն շրջանային գործադիր կոմիտեի առաջադրանքների, նաև մշակել բոլոր այն միջոցառումները, որոնք ապահովում են հիշյալ պլանների կատարումը:

բ) Մասնակցել բոլոր այն ձեռնարկումների մշակման, որոնք ապահովում են տնտեսությունների կուլտուրականացումը ու բերքատվության բարձրացումը (աղրոմելիորատիվ ձեռնարկումներ, ճիշտ ցանքափոխություն և այլն), հսկել և ոժանդակել տվյալ գյուղի ամբողջ տերիտորիայում այդ ձեռնարկումների կիրարկմանը:

գ) Ցույց տալ ակտիվ ոժանդակություն կոլտնտեսություններին և խորհտնտեսություններին՝ սերմֆոնդեր կազմելու, հսկողություն սահմանել դրանց պահպանման վրա:

դ) Մասնակցել դաշտավարության վնասատուների դեմ պայքարին, ոժանդակել համապատասխան կազմակերպություններին և հսկել դրանց աշխատանքների վրա:

յե) Հսկողություն սահմանել գյուղատնտեսական գործիքների և մեքենաների ռացիոնալ ոգտագործման վրա, պայքարել հավասարեցման դիմադրության դեմ, ոժանդակել աշխատանքի նորմաների և արտադրական առաջադրանքների կատարման և դերակատարման:

1. Ֆին հարկային սեկցիա

Ֆին–հարկային սեկցիան բաժանվում է յերեք հիմնական բրիգադների–բյուջետային, ֆինանսական միջոցների մոբիլիզացիայի և հարկերի ու տուրքերի:

28. Բյուջետային բրիգադը կատարում է հետևյալ աշխատանքները.

ա) Քննել և մշակել հաջորդ տարվա բյուջետային վերահսկիչ թվերը, անհրաժեշտ դեպքերում այդ թվերում փոփոխություններ անել բյուջեյի ոգտին, յեկամտաբեր աղբյուրները ավելի լավ և ռեալ կերպով ընդգրկել նախատեսված ձեռնարկումների տնտեսական նպատակահարմարությունների ուղղությամբ:

բ) Քննել գյուղխորհուրդի բյուջեյի յեռամսյա դրամարկղային պլանները:

գ) Լսել բյուջեյի կատարման մասին յեռամսյա, կիսամյա և տարեկան հաշվետվություններ:

դ) Քննել բյուջեյի լրացուցիչ նախահաշիվները, որոնք կազմված են նոր հայտնաբերված յեկամտային աղբյուրների հաշվին և կատարված լրացուցիչ ծախսերի առթիվ:

յե) Ոժանդակել գյուղական բյուջեյի և դրամարկղի պլանների կատարման, պայքարել խնայողության ռեժիմի, գյուղխորհուրդի բյուջետային հաշվառման և հաշվետվության բարելավման համար:

զ) Հսկողություն սահմանել աշխատավարձի ֆոնդերը ճիշտ ծախսելու, դպրոցական, բժշկական, անասնաբուժական, աշխատակիցների և ագրոտեխնիկների աշխատավարձը ժամանակին վճարելու:

ՀԱՄԱՐ

29. Միջոցների մոբիլիզացիայի բրիգադը կատարում է հետևյալ աշխատանքները.

ա) Գյուղխորհուրդների ղեկավարությամբ կազմակերպում և կիրառում է կամավոր մուծումների մասին մասսայական բացատրական աշխատանք (փոխառություններ իրացում, խնայդրամարկղների մուծումներ, կոոպերատիվ մուծումներ, Տրակտոր կենտրոնի սեկցիաների իրացում և այլն):

բ) Հսկում է մասսայական հասարակական ֆինանսական կազմակերպությունների (Պետարկի և խնայդրամարկղների աշխատանքներին ոժանդակող հանձնաժողովների ֆինբրիգադների, ֆինպոստերի) աշխատանքներին, վորպեսզի նրանց աշխատանքի պրակտիկայում խեղաթյուրումներ տեղի չունենան:

գ) Ստուգում է բոլորի լրիվ ներդրավումը փոխառություններում:

դ) Վերանայում է միջոցների մոբիլիզացիայի պլանները՝ նպատակ ունենալով կազմել հանդիպական պլաններ, ստուգում է ազգաբնակության տարբեր խմբերի համար առաջադրանքների բաշխումը և ի հայտ է բերում այդ պլանները իրականացնելու լավագույն ձևերը:

յե) Ոժանդակում է ֆին-պլանների և այլ մասսայական ձեռնարկումների դեկատային կատարման, վորոնք հնարավոր են դարձնում թե տարեկան, կվարտալային և թե ամսական ֆինպլանների կատարումը:

30. Հարկային բրիգադը կատարում է հետևյալ աշխատանքները.

ա) Մշակել գյուղատնտեսական հարկի, ինքնահարկման կուլտուրական հարկի և ապահովագրական վճարումները և ներկայացնել գյուղխորհուրդին ի հաստատություն, ոժանդակել կիրառելու կոլտնտեսությունների, գյուղխորհուրդի ղեկավարությամբ կազմակերպել և անցկացնել մասսայական ագիտացիոն-բացատրական աշխատանք հիշյալ կամպանիաների նշանակության և կիրառելու կարգի մասին:

բ) Կազմակերպել գյուղատնտեսական հարկերի կամավոր տուրքերի, կուլտուրական հարկերի և ապահովագրական վճարումների ժամանակից առաջ մուծումը, ստուգել և ոժանդակել դասակարգային մոտեցման հիմունքներով անցկացնելու մի շարք միջոցառումներ այդ գումարները գանձելու համար:

գ) Կազմակերպել անլեգալ ձևով աշխատող մասնավորների գործունեությունը յերևան հանելու գործը, այսինքն ծախելու նպատակով գյուղատնտեսական մթերքների և հումքի գնումները և այլն:

դ) Միջոցներ ձեռք առնել զանազան յենկամուտների գանձումը կանոնավոր ձևով հաշվի առնելու համար, հսկողություն սահմանել հիշյալ գումարների ճիշտ նպատակին կամ շրջանային ֆինբաժնի ցուցմունքների համաձայն ոգտագործման վրա:

յե) Հսկել համաձայն գյուղխորհուրդի և շրջֆինբաժնի վորոշման և դրավոր հանձնարարության պետական և տեղական հարկերը և տուրքերը պայմանաժամին չվճարողների դույքը ցուցակագրելու և վճարելու աշխատանքներին, անպայման հետևելով որենքով սահմանված կանոններին:

զ) Մասնակցել մշակելու համար այն միջոցառումները, վորոնք անհրաժեշտ են յերևան հանելու չարամիտորեն պետական հարկերը չվճարողների թաղցրած դույքը, այդ խնդրի շուրջը մոբիլիզացիայի յենթարկելով կոլտնտակտիվն ու ազգաբնակության շքավոր միջակ մասսաները:

ը) Մասնակցել հաշվառքային, վերստուգիչ, գյուղատնտեսական հարկերի գնահատու ապահովագրական անասունների ստանալու և կարկտահարության առթիվ կազմված ակտերը ստուգող և այլ հանձնաժողովների աշխատանքներին:

թ) Լսել և քննարկել անցկացված տնտեսական հաշվառումների արդյունքները, ստուգել կուլակային տնտեսությունների հայտնարերումը և հարկադրումը, հարկերի, ինքնահարկերի, ապահովագրական գանձումների ճիշտ բաշխումը, կոլտնտեսություններին, կոլ-

մենատնտեսներին տրված արտոնությունների ճիշտ և ժամանակին լինելը, նույնպես և ներկայացված դանձների առթիվ տրված յեզրակացությունները:

ժ) Հայտնել նախագահության և գյուղխորհուրդի պլենումին՝ գյուղատնտեսական հարկերի, ինքնահարկային և աշխատավարձի ապահովագրական վճարումների, կուլտ-հարկերի ապահովագրության կերառման առնչությամբ հայտնաբերված թերությունների մասին, հիշյալ թերությունները անմիջապես վերացնելու նպատակով:

ի) Յերեվան հանել տեղական հարկերով հարկադրման յենթակա օբյեկտներն ու սուբյեկտները (ռենտաներ, չինություններից դանձվելիք տուրքեր; ձայնագուրկներից դանձվելիք տուրքեր) և կազմակերպել այդ հարկերի ճիշտ բաշխումը ու դանձումը:

լ) Յերեվան հանել գյուղխորհուրդի տերիտորիայում գտնվող հարկային և յեկեմտային այլ աղբյուրները—հողային, ձկնային, անտառային պիտանի վայրերը, կոմունալ դույքեր և այլն:

խ) Հսկել տարիֆների և վարձակալական դրույքների ճիշտ կիրառման վրա:

3. Կոոպերատիվ-մթերման սեկցիա

31. Կոոպերատիվ-մթերման սեկցիան բաժանվում է յերկու հիմնական բրիգադների՝ կոոպառեվտրական և մթերման:

32. Կոոպ-առեվտրական բրիգադի վրա դրվում են հետևյալ աշխատանքները.

ա) Քննության առնել և ուժանդակել պլանների կատարմանը կոոպերացված ազգաբնակության մեջ:

բ) Կազմակերպել կոլտնտեսությունների, կոլտնտեսականների և աշխատավոր մենատնտեսների գյուղատնտեսական մթերքների առևտուրը:

Ուժանդակել պետական առեվտրական-մթերող և կոոպերատիվ կազմակերպություններին՝ ծավալելու կոլտնտեսական-տոնավաճառներ, շուկաներ, նույնպես

և կազմակերպել տոնավաճառ և շուկա յեկող կոլտնտեսականների և աշխատավորական մենատնտես գյուղացիների կուլտուրական սպասարկումը:

դ) Ուղնել կոոպերատիվ և այլ առեվտրական կազմակերպություններին՝ նախապատրաստվելու գյուղատնտեսական կամպանիաների համար ապրանքների ճիշտ ինքնամթերման և ժամանակին փոխադրելու գործում:

յե) Հսկել կոոպերատիվ ապարատի աշխատանքների վրա, պայքարել այդ ապարատները անհարազատ տարրերից մաքրելու:

զ) Ուժանդակել արհեստագործական և տնայնագործական և հաշմանդամների կոոպերացիային տնայնագործների և հաշմանդամների կոոպերացման գործում և յերեվան հանել կեղծ կոոպերատիվները:

ը) Միջոցներ ձեռք առնել՝ բանվորներին, հարվածային կոլտնտեսականներին, մասնագետներին արդյունաբերական ապրանքներով առաջին հերթին մատակարարումը ապահովելու համար՝ կապակցելով մատակարարման մթերումները և արտադրական պլանները հաջող կատարման հետ:

թ) Ուժանդակել կոոպերացիայի և այլ առեվտրական կազմակերպություններին՝ կատարելու ֆինանսական պլանների ու ներքին միջոցների մոբիլիզացիան (փայերի դանձում, ավանդային գործառնություններ և այլն):

ժ) Կազմակերպել կոոպերացիային ուժանդակելու զանազան ձևերը, այն է՝ ստեղծել կոոպերատիվային ակտիվ, վերահսկողության և ուղնության համար կազմակերպել ուժանդակող բրիգադներ և այլն:

33. Մթերումների բրիգադի վրա դրվում են հետևյալ աշխատանքները.

ա) Մշակել իր խորհուրդի տերիտորիայի համար մթերման պլաններ՝ համապատասխան շրջանային կազմակերպությունների պլանների և առաջադրանքների հիման վրա, կանոնավոր կերպով ծավալել մթերման

պլանները կոլտնտեսություններում և մենատնտեսների սեկտորում:

ե) Բանվորներին գյուղատնտեսական մթերքներով և արդյունաբերական ձեռնարկները հումքով մատակարարելու համար՝ ապահովել մթերման և կոնտրակտացիայի պլանների հաջողությամբ կատարումը, կոլտնտեսությունների, էքավոր և մինչև մենատնտեսների մեջ ծավալելով լայն հասարակական աշխատանք, խիստ կուլակ-ունեվոր տնտեսությունների համար սահմանված կայուն առաջադրանքների կատարման համար վճռական ճնշում գործադրելու միջոցով:

զ) Կազմակերպել կոլտնտեսականների և կոլտնտեսությունների լայն մասսաները՝ պայքարելու պլանների հաջող կատարման և գերակատարման համար (հացամթերումներ, մսի, յուղի, բրդի և այլ մթերքների մթերումը) հիմք ունենալով կուսակցության վորոշումները, պայքարել մթերումների բնագավառում կատարվելիք խեղաթյուրումների դեմ:

է) Հետևվել այն մթերող որգանների աշխատանքին, վորոնք գործում են գյուղում, և նրանց ոժանդակություն ցույց տալ:

յե) Սիստեմատիկ վերահսկողություն կիրառել մթերումների համար վորոշված դները պահպանելու, և պայքարել գյուղատնտեսական մթերքների հումքի և ապրանքների չարաշահության դեմ:

զ) Հսկել կշեռքների և չափերի վրա, դործադրել դեղչեր և հավելումներ հանձնված մթերքների վորակի համաձայն, հայտնաբերված անկանոնությունների մասին ժամանակին տեղեկացնել գյուղխորհուրդին:

ը) Ուշադրություն դարձնել, վոր մթերող կազմակերպությունները գյուղատնտեսական մթերքներ հանձնողների հանդեպ իրենց հանձն առած բոլոր պարտավորությունները լրիվ կատարեն, բաց անել թերարաններ, կարմիր անկյուններ, սարքավորել անասունները կապելու և ջրելու տեղերը և այլն:

թ) Ոժանդակել մթերող կազմակերպություններին՝ արտահանվող ապրանքների մթերման գործում, աղդաբնակչության մեջ տանելով բացատրական աշխատանք այդ մթերքների նշանակության մասին:

ժ) Հսկել մթերված ապրանքների ժամանակին փոխադրելու գործի վրա:

ի) Հսկողություն սահմանել աղունավարձի պլանների կատարման և ժամանակին կայանները հանձնման վրա:

լ) Հսկել մթերքները հանձնողների ճիշտ պարգևատրման և մթերված հումքի և մթերքների վորակի պահպանման վրա:

խ) Ոժանդակել կազմակերպելու տեղական պարենավորման աղբյուրներ և ապահովել գյուղի բանվորների, մասնագետների պարենավորումը թե ի հաշիվ այդ աղբյուրների և թե այդ նպատակի համար հատկացված ապրանքային ֆոնդերի, համաձայն պարենավորման պլանների և նորմաների:

ծ) Ուսումնասիրել և վերացնել մթերման պլանների կատարումը խանգարող պատճառները և մթերման ապարատում գոյություն ունեցող թերությունները, ժամանակին տեղեկացնել մթերման զանազան բնագավառներում և բաժանմունքներում առաջացած ճեղքվածքների մասին:

4. Կուլտ կենցաղային սեկցիա

34. Կուլտկենցաղային սեկցիան բաժանվում է հիմնական յերեք բրիգադների՝ կուլտ-կրթական, առողջապահական և կենցաղի բարելավման:

35. Կուլտ կրթական բրիգադի վրա դրվում են հետևյալ աշխատանքները.

ա) Ոժանդակել դպրոցի աշխատանքներին և կազմակերպել հասարակական կարծիք՝ դպրոցական հասակի յերեխաների լրիվ ներդրավման և ուսման վորակի բարձրացման հարցերի չուրջ (դպրոցական կարգապահություն և այլն):

բ) Ոժանդակել դպրոցներն ու այլ կուլտուրական հիմնարկները վառելափայտով, լուսավորությամբ ապահովելու գործին, կազմակերպել հասարակական ուժերն

ու միջոցները՝ դպրոցական շենքերը կառուցելու և նորոգման աշխատանքներին մասնակից դարձնելու ուղղությամբ:

դ) Լսել քաղաքահիմնարկների և կազմակերպությունների չափահասների դպրոցների, կոլտնտեսությունների—ակումբների, կարմիր անկյունների պլանների մասին հաշվետու զեկուցումներ և այլն:

զ) Ոժանդակել դպրոցներին կից տնտեսությունները ուժեղացնելու հողամասերով և ինվենտարով, ապահովել թռչնաբուծական և անասնապահական տնտեսությունների զարգացումը:

յե) Ապահովել մասսայական վերահսկողություն և ոժանդակություն քաղաքս և կուլտուրական հիմնարկներին (կոլտնտակումբներ, կարմիր անկյուններ, չափահասների դպրոցներ, կինո, ռադիո և այլն), նույնպես և մասսայական քաղաքս աշխատանքների առանձին բնագավառներին (ագրոտեխնիկական պրոպագանդա, հակակրոնական դաստիարակություն, ինտերնացիոնալ աշխատանք և այլն):

ղ) Ոժանդակել կազմակերպելու պատի և շրջիկ թերթեր:

ը) Կատարել անգրագետների և կիսագրագետների հաշվառում:

թ) Ոժանդակել կազմակերպելու կիսագրագետների համար դպրոցներ և անգրագիտության վերացման դասընթացներ, ներգրավելով բոլոր կիսագրագետներին ու անգրագետներին:

ժ) Իրականացնել լուսավորության աշխատավորների նյութական կենցաղային պայմանները բարելավելու մասին կուսակցության և կառավարության դիրեկտիվները կատարելու վերաբերյալ հսկողությունը (աշխատավարձ, կոմունալ սպասարկություն, մատակարարում):

ի) Ոժանդակել կամավոր ընկերությունների աշխատանքներին և հսկել նրանց գործունեության վրա («ԿԱՆԸ», Մանուկների Բարեկամների Ընկ., ՄՈՊՐ, Ռադիո սիրողների ընկերութ. և այլն):

36. Առողջապահական բրիգադի վրա դրվում են հետևյալ աշխատանքները.

ա) Քննել գյուղի առողջապահական դործի զարգացման ծավալման վերաբերյալ պլանները՝ շրջանային առողջապահական բաժնի պլանների համաձայն:

բ) Ոժանդակել տեղական ազգաբնակության առողջապահական վիճակի բարելավման առնչությամբ ձեռք առնված միջոցառումները, իրականացնելու մասնավորապես մաքուր ջուր հայթայթելու, փողոցները, հրապարակները, շուկաները, բնակարանները մաքուր պահելու, բաղնիքներ կառուցելու և առողջապահական խնդիրների մասին խորհրդի և դործադիր կոմիտեյի կողմից հրատարակված պարտադիր վորոշումները կենսագործելու ուղղությամբ:

գ) Հսկել թե ամբողջ գյուղխորհուրդում և թե առանձին կոլտնտեսություններում և խորհտնտեսություններում, ՄՏԿայաններում և ձեռնարկություններում (ջրաղաց, յուղի դործարան, փուռ, ճաշարան և այլն) սանիտարական մինիմումի իրականացման, ոժանդակել ծաղկի դեմ և այլ պրոֆիլակտիկ սրսկումների կատարման:

դ) Ուշադրություն դարձնել գյուղխորհուրդներում բժշկական կադրերից ճիշտ ոգտվելու հարցերին և հսկողություն սահմանել բժշկական պերսոնալի նյութական կենցաղային սպասարկման հարցերի մասին կառավարության դիրեկտիվների կատարման վրա:

յե) Կազմակերպել և ղեկավարել կոլտնտեսություններում, խորհտնտեսություններում և ՄՏԿայաններում առողջապահական բջիջների աշխատանքները:

զ) Ոժանդակել ազգաբնակության բժշկական ոգնություն ցույց տալու աշխատանքներին, ընդարձակելով մանկաբարձական կայանների և այլն բուժ. հիմնարկների ցանցը:

ը) Հսկել ազգաբնակության բժշկական ոգնություն ցույց տալու ասպարեզում բուժ. հիմնարկների կողմից դասակարգային սկզբունքի իրականացման վրա:

թ) Հսկել վոր առողջապահական հիմնարկները հիմ-

նական գյուղատնտեսական կամպանիաների առթիվ նախապատրաստվեն (ցանք, բերք, մշակում, բերքահավաք):

ժ) Պայքարել ընդհատակյա մանկաբարձության և «հեքիմության» դեմ, տարածելով լայն աշխատավորական մասսաների մեջ ժողովրդական առողջապահական-դաստիարակչական գրականություն:

ի) Ոժանդակել դաշտերի և արտադրական մասերում կազմակերպելու չուռաչուլթ ոգնության կայաններ:

լ) Կուլտ-կրթական և կենցաղի բարելավման սեկցիայի հետ միասին անցկացնել գյուղի տերիտորիայում գտնվող դպրոցական և նախադպրոցական հասակի յերեխաների և չափահասների համար առողջապահական ձեռնարկումներ (մանկամսուրներ, մանկապարտեզներ, հրապարակներ, Ֆիզկուլտ հրապարակներ) և ոժանդակել դրանց կադրեր պատրաստելու գործին:

37. Կենցաղի բարելավման բրիգադի վրա դրվում են հետևյալ աշխատանքները.

ա) Մշակել միջոցառումներ կուլտ կենցաղային հիմնարկներ կազմակերպելու համար (մանկատներ, մանկապարտեզներ, հրապարակներ, լվացքատներ, բաղնիքներ, լողարաններ և այլն), ոգտագործելով տեղական ագրարնակության նախաձեռնությունը և աշխատանքը ու ներգրավելով նրա, ինչպես և հասարակական կազմակերպությունների միջոցները գյուղխորհուրդի բյուջեյում:

բ) Կազմակերպել հանգստի ռացիոնալ ձևերը-յերեխաների, պատանիների և չափահասների համար (Ֆիզկուլտ աշխատանքներ, մասսայական հասարակական խաղեր, բուլվարներ և այլ զբոսավայրեր):

գ) Հսկել մանկության իրավական պաշտպանության վրա և ղեկավարել խնամակալական խորհուրդի աշխատանքները:

դ) Ոժանդակել քաղաքացիական կացության ակտերը արձանագրող հիմնարկությանը (ԶԱԳՍԵՐ), վերածելով այդ հիմնարկները սոցիալիստական նոր կենցաղի պատվաստման ոջախներ:

յե) Ամեն հնարավոր ոժանդակություն ցույց տալ բանվորուհիներին և գյուղացի կանանց գյուղխորհուրդների, կոոպերացիայի, տնտեսական ոգանների, պրոֆմիների, կոոպերացիայի, տնտեսական ոգանների, պրոֆմիությունների և այլ հասարակական կազմակերպությունների աշխատանքներին մասնակից դարձնելուն, նույնիսկ աշխատավորուհիներին առաջ քաշելու խորհրդային տնտեսական և կուլտուրական հիմնարկների ղեկավար աշխատանքներում:

զ) Գործնական աջակցություն և ոգնություն ցույց տալ խորհրդային և հասարակական աշխատանքներում ընդգրկված, մասնավորապես կուլտ-կենցաղային հիմնարկությունների մեջ աշխատող կանանց:

ը) Հսկել կանանց աշխատանքի և յերեխաների իրավական պաշտպանության վերաբերյալ որենքների և վորոշումների կենսագործման վրա, մասսայականացնելով այդ որենքներն ու վորոշումները աշխատավորական մասսաների մեջ:

թ) Մշակել գործնական միջոցառումներ հին կենցաղի մնացորդների, աշխատավոր կանանց իրավունքի խախտումների, բազմակնության, փակվածության, անչափահասների ամուսնության դեմ պայքարելու համար: Լայն աշխատավորական մասսաների մեջ մասսայականացնել զինվորական ծառայության մեջ գտնվողների և նրանց ընտանիքներին տրված արտոնությունների մասին գոյություն ունեցող որենքները և հսկել, վոր այդ որենքները կենսագործվեն:

ժ. Լայն աշխատավորական մասսաների մեջ ժողովրդականացնել զինվորական ծառայության մեջ գտնվողների և նրանց ընտանիքներին տրված արտոնությունների մասին գոյություն ունեցող որենքները և հսկել, վոր այդ որենքները կենսագործվեն:

5. Ճանապարհաշինարարության և կապի սեկցիան

38. Ճանապարհային շինարարության և կապի սեկցիան բաժանվում է յերկու հիմնական բրիգադների՝ ճանապարհային շինարարության և կապի:

39. Ճանապարհային շինարարության բրիգադի վրա դրվում են հետևյալ աշխատանքները.

ա) Մշակել տեղական նշանակություն ունեցող ճանապարհային շինարարության պլաններ. ոժանդակել այդ պլանների կատարմանը, ոգնել միջրջանային և հանրապետական նշանակություն ունեցող ճանապարհների շինարարության:

բ) Իրականացնել հսկողությունը ճանապարհները, կամուրջները և անցքերը բարեկարգ վիճակում պահելու համար, մշակել գործնական միջոցներ բարելավելու այդպիսիները, հաշվի առնելով գյուղատնտեսության մեքենայացման և ավտոտրանսպորտի աճող պահանջները:

գ) Մշակել գործնական միջոցառումներ՝ ապահովելու ճանապարհային շինարարության մեջ աղգաբնակության գործնական մասնակցությունը և հսկել, վոր այդ բնագավառում աղգաբնակությունը իր ստանձնած պարտավորությունները կատարի:

դ) Իրականացնել վերահսկողություն գոյություն ունեցող և նոր կառուցվող ճանապարհների և կամուրջների պահպանության մասին՝ գյուղխորհուրդների և իշխանության վերադաս որգանների պարտադիր վորոշումների կատարման վրա:

յե) Ակտիվ ոժանդակություն ցույց տալ «Ավտոդոր» կամավոր ընկերության աշխատանքներին:

զ) Ոժանդակել ճանապարհային որգաններին անտառային մասիվների, ավազի հանքերի շահագործման աշխատանքներին՝ ճանապարհային շինարարության կարիքների համար:

40. Կապի բրիգադի վրա դրվում են հետևյալ աշխատանքները.

ա) Իրականացնել հսկողությունը գյուղխորհուրդների սահմաններում գործող կապի որգանների աշխատանքների վրա և ցույց տալ գործնական աջակցություն աղգաբնակությանը լավագույն ձևով ոգտագործելու համար:

բ) Մասնակցել կապի որգանների աշխատանքների պլանների մշակման:

գ) Մշակել տվյալ գյուղխորհուրդի տերիտորիայի հեռախոսացման և ռադիոֆիկացիայի պլանները.

դ) Հսկել թերթերի, գրքերի և այլ թղթակցությունների ժամանակին հանձնման և առաքման վրա:

յե) Ոժանդակել կապի որգաններին նամակատարների, ցրիչների ընտրության և նրանց աշխատանքի պայմանների բարելավման գործում:

41. ԲԳՏ և հեղափոխական որինականության սեկցիան հիմնականում բաժանվում է յերկու բրիգադների՝ ԲԳՏ բրիգադի և հեղափոխական որինականության:

42. ԲԳՏ բրիգադի վրա դրվում են հետևյալ աշխատանքները.

ա) կազմակերպված պայքար ծավալել բյուրոկրատիզմի, քաջքշության դործի հանդեպ անփույթ և չինովնիկական վերաբերմունքի, հիմնարկ—ձեռնարկներում անտնտեսավարության, հաճախորդների հանդեպ տեղական հիմնարկներում ծառայողների կողմից անուշադիր, անհոգ, անտարբեր և արհամարհական վերաբերմունք ցույց տրվելու դեմ:

բ) Խորհուրդի հանձնարարությամբ և վերադաս որգանների առաջադրությամբ ստուգել գյուղխորհուրդի յենթակա հիմնարկ ձեռնարկների, նաև կոոպերացիայի, խորհտնտեսությունների, կոլտնտեսությունների, գյուղատնտեսական և անասնագործական կոոպերատիվ ընկերությունների և ուրիշ հասարակական կազմակերպությունների աշխատանքը:

գ) Ընդունել և քննել տեղական հիմնարկությունների աշխատանքներում կատարված սխալների մասին աղգաբնակության դանդատները, նույնպես ընդունել և ժամանակին ԲԳՏ որգաններին ներկայացնել վերադաս որգանների աշխատանքում նկատված թերությունների դեմ տրված բողոքները:

դ) Հսկել, վոր շրջանային դործադիր կոմիտեյի,

գյուղխորհուրդի, նույնպես և խորհրդային վերադաս որդանների, այդ թվում և ԲԳՏ որդանների վորոշումներ՝ ժամանակին և ճիշտ կենսագործման:

յե) Ողնել սեկցիաներում, պատգամավորական խմբակներում, հիմնարկ-ձեռնարկներում՝ կազմակերպելու կատարման ստուգումը:

զ) Կապ հաստատել մամուլի, պատի թերթի, գյուղթղթակիցների, գյուղխորհուրդների վերստուգիչ հանձնաժողովի և այլ հասարակական կազմակերպությունների, կոմյերիտմիության թերթև հեծելազորի հետ, ողնել մամուլում լույս տեսած թղթակցության առթիվ կատարվելիք քննությանը (գանգատների արկղ, բողոքի գրքեր և այլն):

ը) Սիստեմատիկ պայքար ծավալել բոլոր հասարակական կազմակերպություններում, ձեռնարկներում և հիմնարկներում դասակարգային խորթ տարրերի խրցկվելու դեմ:

43. Հեղափոխական որինականության բրիգադի վրա դրվում են հետևյալ աշխատանքները.

ա) Պարզաբանել ազդարարությանը հեղափոխական որինականությունը.

բ) Հսկել գյուղխորհուրդի տերիտորիայում պարտադիր վորոշումների և որենքի այլ պահանջների առթիվ կարգադրություններ անելու և տուգանքի քաղաքականության կիրառման վրա:

գ) Մշակել պարտադիր վորոշումներ և հսկել դրանց կատարմանը:

դ) Մասնակցել արդարադատության որդանների աշխատանքների ստուգման (գյուղական հասարակական դատարանների, կոլտնտեսության ընկերական դատարանների ստուգում) և ցույց տալ նրանց գործնական ոժանդակություն:

յե) Գործնական ոժանդակություն ցույց տալ միլիցիայի որդաններին, կոլտնտեսական գույքի պահպանության գործը կազմակերպելու և ստուգել նրանց գործունեությունը:

զ) Մշակել միջոցառումներ միլիցիայի աշխատա-

կիցների նյութական կենցաղային պայմանները լավացնելու ուղղությամբ:

ը) Ողնություն ցույց տալ միլիցիային ոժանդակող ընկերությունների աշխատանքներին և հսկել գյուղական կատարածների կանոնավոր ոգտագործման վրա:

ՀՍԽՀ Կենտրոնական գործադիր կոմիտեի կազմբաժնի վարիչ՝ Գ. ՑԵՂԻԱՁԱՐՑԱՆ

Երևան.

ՀՀ Ազգային գրադարան
NL0927596

1933р. - 555

11
26727

ИНСТРУКЦИЯ

О работе секций селсоветов и их бригад